

## ՀԱՎՈՒՅ ԹԱՌԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՇՈՒՐՋ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավուց թաղը միջնադարյան Հայաստանի առավել աչքի ընկած կրոնական և մշակութային նշանավոր կենտրոններից է: Մատենադարան և վիմադրական սկզբնաղբյուրներում բազմաթիվ վկայություններ են պահպանվել, որոնք հնարավորություն են ընձեռում հանգամանալից ներկայացնելու այդ հուշակավոր մենաստանի հիմնադրման ու զորոնեցության պատմությունը:

Վանքի պատմության կարևորագույն խնդիրների ուսումնասիրությանը արժեքավոր աշխատություն է նվիրել հայ մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Հովսեփյանը<sup>1</sup>: Գրքում հանգամանորեն մեկնաբանված են բազմաթիվ հարցեր, որոնցից մեկը՝ սակայն, լրացուցիչ և առավել համակողմանի քննության կարիք ունի: Խոսքը վերաբերում է Գրիգոր Վասակյան Պաշլավունու (նաև Բջնեցի, Մագիստրոս) հայտնի արձանագրության ընդօրինակությանը: Վիմագրի բնագիրը չի պահպանվել, այն մեզ է հասել XVIII դ. ընդօրինակությամբ:

ԹՈՒՐՆ ՆԿԲ (1013). Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՆՆ ՍԱՐԳՍԻ, ԵՄ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ ԻՄՈՑ. ՆԱԵՒ Ի ՏԵՐԱՆՑ ԱՇԽԱՐՀԻՑ ԳԱՆՁԱԳԻՆ ԱՐԱՐԻ ԶՎԱՅՐՍ ՍՈՐԱ ԼԵՐԱՄԲՆ ԵՒ ԴԱՇՏԱՄԲՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՄԲՆ ՈՐ Ի ՍՄԱ, ՔԱՌԱԴԷՄԲ ԶՈՐՍ ԱՆԿԵԱՄԲ ՅԱԶԱՄԲ ԵՒ ԱՀԵԿԱՄԲ Ի ԴԻՄԱՅ ԵՒ Ի ԹԻԿԱՆՑ. ԵՒ ՏՈՒԱՔ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐԻ ԹՂԹՈՎՆ ԵՒ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿՆՔՈՎՆ. ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԶԵՌԱԳՐՈՎ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆ. ԵՒ Ի ՆԱԿԱԿԱՏԻՍ ՏԱՃԱՐԻՍ, ԶՈՐ ՇԻՆԵՑԱՔ ԶՀԱՅՐԵՆԻՍ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ՝ ՈՐ Է ՀԱՅՈՑ ԹԱՌ, ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ԵՒ ԱԹԱՐԱՆ ԵՒ ԶԵՌԱԳՐՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԻՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐ Ի ՓԱՅՏԻՆ, ԽՆԴՐԵԼԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԿԵՏԱՐԱՆՋԻՆ, ՀՐԱՄԱՆԱԿ ՄԱՒՐ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. ԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՎԵՐՍՏԻՆ ԶՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ ՎԵՐՋԻՆՍ ՔԱՆ ԶԱՌԱՋԻՆՆ. ԱՍՏ ԵԴԱՔ ԶՎԷՄՆ ՀԱԿԱՏՈՑ ՀԻՄԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ. ԳՐԻԳՈՐ ՎԱՀՐԱՄ ՊԻՏԱՆԻՆ<sup>2</sup>:

Քննենք վկայագրի ընդօրինակման, ընդօրինակողի և գլխավորապես արձանագրության վավերականության հետ կապված հանգամանքները:

Գրիգոր Մագիստրոսի արձանագրությունը մեզ է հասել երկու ընդօրինակությամբ, որոնք պահպանվել են Սիմեոն Երևանցու և Հովհաննես Շահխաթունյանցի աշխատություններում<sup>3</sup>: Սիմեոն Երևանցին արձանագրության բնագիրը ներկայացնելուց առաջ հաղորդում է. «Այլ և զկնի ժամանակաց անցելոց փլեալ էր եկեղեցին շինեալն ի Գրիգոր Մագիստրոսէ, Աստուածատուր կաթողիկոսն Համատանցի կամեցաւ վերստին շինել, զոր և շինեաց իսկ զորմունսն քարակոփ, մինչև ի տանեաց: Ի ՌՃՀ (1721) թուոյն մերում. սակայն ի ձախորդութենէ ժամանակին մնաց զործն անկատար և կա այնպէս կիսատ մինչև ցայսօր: Եւ ի վերստին շինելն Աստուածատուր կաթողիկոսին զփլեալ որմուն-

1 Գ. Հովսեփյան, Հավուց թաղի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937:

2 Նույն տեղում, էջ 2:

3 Սիմեոն Երևանցի, Զամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 276, Հովհաննես Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 293:

սըն, գտնալ եղև արձանաքար մի յորում դրեալ էր վերոյ դրեցեալ Գրիգոր Մագիստրոսն յիշատակարանս իւր, զորոյ երեսն առեալ գրեցաք աստ ի գիտութիւն ապագայիցդ<sup>4</sup>։ Մյուս ընդօրինակութիւնը Հ. Շահխաթունյանցի ձեռքն է ընկել Պոլսում եղած ժամանակ 1820—1825 թթ.։ Այնտեղ նա հանդիպում է ոմն տիրացու Առաքելի՝ «Ճապի» մականունով։ Նա Շահխաթունյանցին է հանձնում մի թուղթ, որը գաղտնի վերցրել էր էջմիածնի գրապահոցից։ Դա հենց վերոհիշյալ արձանագրութեան ընդօրինակութիւնն էր՝ կից հիշատակարանով, որտեղ կարդում ենք.

«Վերոյգրեալ արձանս դրեալ կայր ի վերա սուրբ Ամենափրկչին արքայաշէն դարպասին դուրս կոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր։ ՌՃՀ (1721) թուին Ածատուր կաթողիկոսն կամեցաւ վերստին նորոգել, ի քակելն ես մեղաւոր ծառայ սուրբ տանս Քուրդ Յոհաննէս իմ ձեռամբս վերադի գարձանս զայս և գրեցի աստ»<sup>5</sup>։

Հ. Շահխաթունյանցը, վերադառնալով էջմիածին, վաճառ գրապահոցում տեսնում է «գօրինակն այնր արձանագրութեան ի գրուածս Սիմէոն կաթողիկոսի Երևանցոյ («Ջամբուի» հեղինակային ձեռագիրը պահվում էր էջմիածնի գրապահոցում—Գ. Ս.), բայց ոչ զայն գրված յայտարար թէ՛ ով զայն արձանագրութիւն ի գիր էառ ի գրուածոց անտի եկեղեցւոյն և երբ որ գրեալ ի ներքո արձանագրութեանն ունէր օրինակ զայս»<sup>6</sup>։ Ինչպես տեսնում ենք, Սիմէոն Երևանցու աշխատութեան ձեռագիրը և տպագիր օրինակներում որոշ տարբերութիւն կա։ Տպագիր օրինակի արձանագրութեան ներածականում նշված է, որ վիմագիրն ընդօրինակել է ինքը՝ Երեանցին. «Երեսն առեալ գրեցաք աստ ի գիտութիւն ապագայիցդ»։ Սակայն Շահխաթունյանցը «Ջամբուի» բնագրում չի հանդիպել նման հաղորդման. «...բայց ոչ զայն գրված յայտարար թէ՛ ով զայն արձանագրութիւն ի գիր էառ ի գրուածոց անտի եկեղեցւոյն...»։ Կարծում ենք, որ արձանագրութեան բնագիրը և հատկապես նրա ներածական խոսքը աշխատութեան ձեռագրում սկզբնապես բացակայել են և մուտք են գործել այնտեղ հետագայում, առաջինը մինչև XIX դ. 20-ական, երկրորդը՝ 30-ական թվականներին, այսինքն Շահխաթունյանցի՝ «Ջամբուի» ձեռագրին ծանոթանալուց առաջ և հետո։

Անդրադառնանք արձանագրութեան մյուս ընդօրինակութեան ներածականին, որի հեղինակն է Քուրդ-Հովհաննէսը։ Համաձայն նրա հաղորդման, վկայագիրը փորագրված է եղել Հավուց թառի, «Ամենափրկիչ արքայաշէն դարպասի» հարաւային պատին, արտաքուստ, պատուհանի վերևում։ «Ամենափրկիչ» է կոչվել վաճառ պահվող փայտակերտ սրբութիւնը։ Հետագայում այդպես է անվանվել համակառուցի պարսպից դուրս, առանձին կանգնած Բլրի եկեղեցին՝ կառուցված XIII դարում։ Սկսած XV դարից Հավուց թառ անվանը զուգահեռ օգտագործվել է նաև Ամենափրկիչը։ Մի բան պարզ է. XI դ. առաջին կեսում, երբ կարող էր գրված լինել արձանագրութիւնը, Հավուց թառի ոչ մի շինութիւն, չնայած այնտեղ պահվող նույնանուն սրբութեան, չի կոչվել «Ամենափրկիչ»։

Արդ, ինչու է արձանագրութիւն ունեցող կառուցը (դարպաս) կոչվել արքայաշէն։ Գրավոր աղբյուրների քննութիւնից պարզվում է, որ վանական կառույցներից որևէ մեկը չի հիմնադրվել կամ կառուցվել թագավորի կողմից։ Ակնհերեաբար, այստեղ Քուրդ-Հովհաննէսը նկատի է ունեցել իր ներկայացրած վիմագրի բնագրում նշված «աշխարհակալ թագաւորի թուղթը» և «կայսերական կնիքը»։ Վերջապես, այդ որ շինութիւնն է, որ հորջորջված է արքայաշէն դարպաս։ Հայ մատենագրութեան մեջ «դարպաս» կամ «դարպաս» բառը տարրեր բացատրութիւն ունի. «արքունի կամ իշխանական դուռ, մեծ դուռ, պալատ, ապարանք», փոխաբերաբար՝ «ընծա՝ նուէր, որ իբր դառն

<sup>4</sup> Սիմէոն Երեանցի, նշվ. աշխ., էջ 276։

<sup>5</sup> Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 293։


<sup>6</sup> Նույն տեղում։



առաջ տրուում է մեծաւորին կամ վանքերի մէջ փակակալ վարդապետին, իբր օթեանի կամաւոր վարձք»<sup>7</sup>։ Իմաստային այլ տարբերակներ են հանդիպում մի շարք բարբառներում. «մեծ դուռ»՝ Ալաշկերտի բարբառում, Ասլանբեկի, Մուշի, Կաբինի, Ռոդոստոյի բարբառներում՝ «վանքին տրուած դրամական նուէր», իսկ Այնթապի բարբառում՝ «առաջնորդարան, վեհարան»<sup>8</sup>։ Գ. Հովսեփյանը «արքայաշէն դարպաս» համարում է «մադիստրոսաշեն եկեղեցին, որի վերա և բնականաբար, քանդակված էր արձանագրութիւնը»<sup>9</sup>։

Հուշարձանախմբի վաղագույն կառուցը գավիթն է, որն իր ճարտարապետական հորինվածքով կարող է թվագրվել XI դարով։ Գ. Հովսեփյանը գտնում է, որ խնդրաւորաբար արձանագրութիւնը փորագրված է եղել այդ գավթի կամ, ավելի հավանական է, նրան արևելքից հարող եկեղեցու հարավային պատին<sup>10</sup>։ Սակայն հարկ է նշել, որ այդ եկեղեցին երբեք չէր կարող կառուցված լինել XI դարում։ Այն իր տեղագրութիւնով չի կապվում գավթի հետ (տե՛ս «գծագիրը»)։ Ինչպես երևում է հատակագծից, գավթի արևելյան մուտքը բացվում է ուղիղ եկեղեցու հյուսիսային պատի մեջ։ Եկեղեցու հատակը բավական ցածր է գավթի հատակից։ Գարեգին Հովսեփյանը այս շինութիւնը համարում է Կաթողիկե եկեղեցի։

Հայ ճարտարվեստում գոյութիւն ունեն մի սկզբունք. երբ հիմնադրվում էր որևէ վանք, սկզբնապես կառուցվում էր եկեղեցին, այնուհետև դրան արևելքից կցում էին գավիթը (շատ հաճախ գավթի համար արևելյան պատ էր ծառայում եկեղեցու արևմտյան պատը)։ Հավուց Թառ մենաստանում հակառակ պատկերն է։ Ինչ վերաբերում է Կաթողիկե կոչված այդ եկեղեցուն, ապա այն, չնայած իր ներքին խաչաձև հատակագծային կառուցվածքին, անկյունային շորս ավանդատների առկայութեան, մեծապես շեղվում է հայկական եկեղեցիների ընդհանուր հորինվածքային ձևերից, որն արտահայտվում է կիսակլոր արևելյան աբսիդի և բեմի բացակայութեամբ։ Եթե ավելացնենք նաև այն փաստը, որ եկեղեցու հյուսիսային պատը պատկանում է այդ կողմում գտնվող մեկ այլ կառուցի (ամենայն հավանականութեամբ՝ եկեղեցու), ապա կարծում ենք, որ անհավանական չի լինի հրաժարվել տվյալ շինութիւնը եկեղեցի (հատկապես Գրիգոր Մագիստրոսի կառուցած) համարելուց։ Այդ կառուցի հյուսիսային պատի ստորին երկայնքով պահպանվել է եռաստիճան հիմնաշարը, պատի վրա ձգվում են շորս նեղ որմնամուկները, որոնք (միջին երկուսը) տաշված, հարթեցված են այն տեղերում, որտեղ հյուսիսային խաչաթևի վերին կամարը մեկտեղվում է պատի հետ։ Այդ պատի վրա պահպանվել են բազմաթիւ արձանագրութիւններ, որոնք «եկեղեցին» կառուցելու ժամանակ մնացել են շաղախի տակ (փլուզումների հետևանքով դրանք ամբողջովին բացվել են)։



1 ԳԱՎԻԹ  
2 ԵԿԵՂԵՑ

7 Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արձատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 634։

8 Նույն տեղում, էջ 635։

9 Գ. Հ ո Վ Ս Ե Փ յ ա ն, նշվ. աշխ., էջ 15։

10 Նույն տեղում, էջ 10։

Վկայագրերը թվագրվում են XIII դ. 30-ական թվականներից մինչև XIV դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանով: Արձանագրություններից մեկում ոմն Հակոբ սարկավագ իր միջոցներից գումար է նվիրում « Ի ՍԲ ԿԱԹՈՂԻԿՆԻՍ», այն սալարկելու համար<sup>11</sup>: Կարծում ենք, որ այս վկայությունը բավարար հիմք է ընձեռում ճշտելու Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու տեղագրությունը, այսինքն՝ Կաթողիկե եկեղեցին ոչ թե Գ. Հովսեփյանի նշած կառույցն է, այլ վերջինիս հյուսիսային կողմում գտնվող շինությունը, որից միայն հարավային պատն է պահպանվել: Ցավոք, այս կառույցի ճարտարապետական հորինվածքի մասին չենք կարող որոշակի կարծիք հայտնել, որովհետև մյուս պատերը հիմնովին քանդված են, իսկ տեղանքը ծածկված է հաստ հողաշերտով:

Ի մի բերելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ առկա տվյալները, հանգում ենք հետևյալին.

1. Հավուց թառի հուշարձանախմբում միակ շինությունը, որը ժամանակամերձ է Գրիգոր Մագիստրոսին և կարող էր կառուցված լինել նրա կողմից, գավիթն է:

2. Համակառույցի Կաթողիկե եկեղեցին ոչ թե գավթին արևելքից հարող կառույցն է, այլ գտնվել է վերջինիս հյուսիսային կողմում: Մատենագրական և վիմագրական հիշատակությունները ցույց են տալիս, որ այն կառուցվել է XII դ. վերջերին կամ ավելի հավանական է՝ XIII դ. առաջին տասնամյակում: Այն առաջին անգամ հիշատակվում է 1214 թ. Հավուց թառում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում<sup>12</sup>:

3. Գավթի արևելյան կողմի «եկեղեցին» կառուցվել (կցվել է XIV դ. երկրորդ քառորդից ոչ շուտ, քանի որ Կաթողիկե եկեղեցու հարավային պատին փորագրված արձանագրություններից մեկը թվագրված է 1307 թ.):

Նշված պարզ պատճառներով Գրիգոր Մագիստրոսի արձանագրությունը չէր կարող գրվել Գ. Հովսեփյանի՝ Կաթողիկե եկեղեցի համարած կառույցի հարավային պատին: Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ Կաթողիկե եկեղեցին «հալածություն Գեորգ իշխանի եկեղեցին է»<sup>13</sup>: Նշենք, որ Մխիթար Այրիվանցու երկում 1001—1011 թթ. միջև գրանցված է հետևյալ փաստը. «Շինի Հաույ թառ ի Գեորգ իշխանէն Քեղոյ»<sup>14</sup>: Այս հիշատակությամբ է նա մեկնում Մագիստրոսի վկայագրում նշված «վերստին շինեցի զեկեղեցիս» բառակապակցությունը: Նվա մի կարևոր հանգամանք, որը նույնպես բացառում է մագիստրոսյան վկայագրի գոյությունը: Քուրդ-Հովհաննեսը նշում է, որ արձանագրությունը փորագրված է եղել «ի վերայ սուրբ Ամենափրկիչ արքայաշէն դարպասին դուրս կոյս հարավակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանն խախտեալ կայր»: Ինչպես պարզվեց, միակ շինությունը, որ կարող է հավանել «արքայաշէն դարպաս» կոչվելուն, գավիթն է: Այն մյուս շինությունների հետ ավերվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ, և մեր համոզմամբ գավթի ներկա վիճակը առաջացել է հենց այդ արհավիրքի օրերին: Ինչ վերաբերում է նրա հարավային պատին, ապա այն գրեթե լիովին քանդված է (մնացել է մեկ մետր բարձրությամբ քարաշարը): Այսպիսով, Քուրդ-Հովհաննեսը չէր կարող ընթերցել այդ որմի վրա, պատուհանի վերևում փորագրված արձանագրությունը:

Սիմեոն Երևանցին նշում է, որ իր ընդօրինակած արձանագրությունը փորագրված է եղել առանձին ընկած քարի վրա՝ հայտնաբերված դեռևս Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի ձեռնարկած շինարարության ժամանակ՝ 1715—1721 թթ., այսինքն՝ երբ Քուրդ-Հովհաննեսն ընդօրինակել էր վիմագիրը: Ինչպես տեսնում ենք, հակասությունն առկա է. նույն ժամանակամիջո-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>12</sup> «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար», կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 83:

<sup>13</sup> Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 10:

<sup>14</sup> «Մխիթարայ Այրիվանցու Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 37:



ցում մեկն ընդօրինակել է կանգուն պատի, մյուսն՝ ընկած քարի վրայից: Մենք չենք վիճարկի այն հարցը, թե երկու ընդօրինակություններից որն է հավաստի: Փաստերը ցույց են տալիս, որ երկուսն էլ իրականությունը չեն համապատասխանում: Մեր հետևությունների համար յուրջ կովան է նշված երկու ընդօրինակությունների բացառիկ նույնությունը. թվում է, թե դրանք գրել է նույն անձը: Մեր օրերում, անգամ, երբ մշակված են արձանագրությունների վերծանության գիտական սկզբունքներ, հաճախ միևնույն վիճագրի տարբեր մասնագիտական վերծանությունները տարբեր են լինում: Ըստ ներկայացված բնագրի, այն բավական ընդարձակ է և փորագրված պետք է լիներ մի քանի արի վրա: Նկատի ունենալով լեզվական անհարթությունները (ընդօրինակություն մեջ), թվականի անհամապատասխանությունը և այն համոզմունքը, որ XVIII դ. սկզբներին իրականացված (ոչ մասնագետ վիճագրագետների կողմից) երկու, այդքան նույնական վերծանությունների առկայությունը համարյա անհնար է, պետք է ենթադրել, որ գոյություն է ունեցել միմյանցից ընդօրինակված մեկ «վերծանություն»:

Իսկ ո՞վ է Քուրդ-Հովհաննեսը: Վերծանությանը կից հիշատակագրության մեջ նա հանդես է գալիս որպես «ծառայ սուրբ տանս», որը թույլ է տալիս նրան համարել էջմիածնի վանական: Եթե XVIII դ. առաջին տասնամյակներին վերաբերող նյութերում մեզ չի հաջողվել այլ հիշատակություններ գտնել Քուրդ-Հովհաննեսի մասին, ապա մեկ այլ Հովհաննեսի, նույնպես «Քուրդ մականվանեալ» հանդիպում ենք XIX դ. 10—30-ական թվականներին՝ էջմիածնի վանքի գրագրի պաշտոնում: Նրա մասին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Մեսրոպ Թադիադյանն իր ճանապարհորդական նոթերում: Մինչև 1820 թ. Թադիադյանը եղել է նրա աշակերտ-սպասավորը (մոնիթ): Այնուհետև նա Հովհաննես վարդապետ Բագրևանդցուն (Քուրդ-Հովհաննեսին) հանդիպում է 1834—1836 թթ. Նոր Զուղայում, որտեղ վերջինս հոգևոր թեմի առաջնորդն էր<sup>15</sup>: «Յովհաննէս վարդապետ ի Բագրևանդա զոր հասարակօրէն «Քուրտ» աշուանէր ուխտ միաբանից, էր այր երկայնահասակ և բարակ, շնչոտ երեսով, քարձ մօրուօք և ղեղնաբիւր աչօք, ամենեւին զուրկ յազատական արուեստից լեզուի մերոյ: Վարք նորա հանգունատիպք գիտութեանն և խառնից երկրի իւրում, անգութ, խժական, խորամանկ և կասկածոտ միանգամայն»<sup>16</sup>, — գրում է Թադիադյանը: Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Բագրևանդցին աչքի չի ընկել գրաբարի իմացությամբ, իսկ նրա բնավորության և վարքի վերոհիշյալ բնութագրերը թույլ են տալիս մտածելու, որ այդպիսի անձնավորությունը իր կամ թեկուզ վանական միաբանության ինչ-ինչ մտադրություններ իրականացնելու նպատակով, կարող էր դիմել կեղծիքի: Առկա փաստերը (անվան, մականվան, գործելավայրի նույնություն), կարծում ենք, բավարար հիմք են ընձևում արձանագրությունն ընդօրինակող Քուրդ-Հովհաննեսին և Հովհաննես Բագրևանդցուն համարել նույն անձը: Ինչ վերաբերում է ժամանակաշրջանների տարբերությանը, ապա դա էլ կարելի է հանգուցալուծել, եթե մտածենք, որ հեղինակը արձանագրության ընդօրինակման ժամանակը մոտ մեկ հարյուրամյակով ետ է տարել՝ հետապնդելով երկու նպատակ. ընդօրինակմանն առավել հնություն, ըստ այդմ էլ, առավել վավերականություն հաղորդել, ինչպես նաև կեղծելու հանգամանքն իրենից հեռացել: Եվ, թերևս, պատահական չպետք է համարել այն փաստը, որ նա ընդօրինակությանը կից հիշատակագրության մեջ հանդես է գալիս ոչ թե Հովհաննես վարդապետ Բագրևանդցի, այլ՝ Քուրդ-Հովհաննես:

Քննելով Գրիգոր Մագիստրոսին վերագրվող արձանագրության հայտնաբերման հանգամանքները, եզրակացնում ենք.

15 Մեսրոպ Թադիադյան, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վտվերագրեր, Երևան, 1975, էջ 541, ծանոթ. 12:

16 Նույն աւելում, էջ 21:

1. Գրիգոր Մազիստրոսի կառուցած շինությունը (եկեղեցին) չի պահպանվել ոչ միայն մեր օրերում, այլև XVIII դարում, երբ «ընդօրինակվել է» շինարարական արձանագրությունը: Այդ իսկ պատճառով բացառվում է սույն վիճադրի առկայությունը, թեև XVIII դարում, որևէ կառույցի պատին:

2. Արձանագրության հայտնաբերման և տեղադրության հանգամանքները հնարավոր են, հեղինակն է «ընդօրինակողը»:

3. Երկու «ընդօրինակություններն» էլ կատարել է նույն անձը՝ ի դեմս Քուրդ-Հովհաննես վարդապետ Բագրևանդցու, որն ապրել է XIX դ. առաջին կեսում:

4. Սիմեոն Երևանցու աշխատության մեջ ներկայացված ընդօրինակությունը և վիճադրի հայտնաբերման նշված հանգամանքները ենթադրել են տալիս, որ դրանք ուշ շրջանի հավելում են<sup>17</sup> իրականացված էջմիածնի վանքի գրադիր Հովհաննես Բագրևանդցու կողմից:

5. Վերոհիշյալ եզրահանգումները չեն բացառում ինչպես Գրիգոր Մազիստրոսի՝ Հավուց թառում եկեղեցի կառուցելը, այնպես էլ համապատասխան շինարարական արձանագրության առկայությունը այդ (այժմ գոյություն չունեցող) կառույցի որմերին:

Արձանագրության վավերականության վերաբերյալ կասկածներ հայտնվել են նաև առաջ: Ինչպես նշում է Ակինյանը, Հավուց թառում և Կեչառուի շինարարական աշխատանքներն իրականացրել է ոչ թե Գրիգոր Վասակյան Մազիստրոսը, այլ Գրիգոր-Ապիրատ Հասանյան Մազիստրոսը<sup>18</sup>: Նա, քննելով Հավուց թառի արձանագրությունը, առաջ է քաշում մի շարք կովաններ, որոնց հիման վրա վիճադիրը համարում է անվավեր և կեղծիք:

ա) Արձանագրության լեզուն և արտահայտման եղանակը չեն համապատասխանում ԺԱ գարու արձանագրական ընկալյալ ոճին:

բ) Կան հոն պատմական հակասություններ:

գ) Բացահայտ կրտսավի, որ հեղինակը կը ձգտի Հավուց Թառի սեփականությունը ցույց տալ շրջակա դաշտն ու լեռը:

դ) Ուշագրություն հրավիրել կը նկրտի վանքին մեջ պահված պատկերին վրա, որում հնությունը մինչև առաջին դար կը հանն:

ե) Շարականն «Ջորս ըստ պատկերի բում» աղերսի մեջ դնել կուզեն Ամենափրկչին պատկերին հետ, իբրև երգված եկեղեցվո շինության նավակատիքին<sup>19</sup>:

Ն. Ակինյանը գտնում է, որ արձանագրության կեղծողը ծանոթ է եղել շարականին և Կեչառուի 1051 թ. (1054 թ.) արձանագրությանը (նաև Գեղարդի 1283 թ. Պոռ իշխանի վկայագրին): Այնուհետև նա հարց է տալիս, թե ինչ կարիք կար բերել կայսեր թուղթը, եթե կար Գաղիկ Ա թագավորը. ուշագրություն է դարձնում այն փաստին, որ վանքի անունը վիճագրում վկայված է Հայոց թառ ձևով: Նա ենթադրում է, որ կեղծողը Քուրդ-Հովհաննեսն է և որ այդ կեղծիքը նա կատարել է վանքի կալվածքները պատմական վավերագրով մը՝ հաստատելու համար:

Անշուշտ, Ն. Ակինյանի վերոնշյալ կովանների դեմ կարելի է առարկություններ գտնել, ինչպես օրինակ.

Ա) Որ լեզուն և ոճը չեն համապատասխանում ԺԱ դարին, կարելի է բացատրել արձանագրության դժվարընթեռնելիությամբ և վերծանողի՝ գրաբարի վատ իմացությամբ:

<sup>17</sup> Ինչպես նշվեց, «Ջամբուխ» ընագիրը գտնվում էր էջմիածնի գրատանը և այն կարող էր ընկնել Հովհաննես Բագրևանդցու ձեռքը:

<sup>18</sup> Ըստ Ակինյանի, Գրիգոր-Ապիրատ Հասանյանը մազիստրոսական տիտղոս ստացել է 1001 թ.: Երբ Բարսեղ Բ կայսրը եկել էր Հայաստան, իսկ նրա գործունեությունը թվագրվում է 1000—1021 թթ.:

<sup>19</sup> Ն եր ս ե ս Ա կ ի ն յ ա ն, Գրիգոր-Ապիրատ, որդի Հասանա, Մազիստրոս 1021 («Ակոս», 1945, № 9, էջ 118):



Բ) Պատմական հակասությունների հարցը կլուծվի, եթե հետևենք Գ. Հովսեփյանի այն կարծիքին, որ արձանագրությունը փորագրվել է հետին թվով:

Գ) Այդպիսի միտում կա (Ն. Ակինյանի Գ կովանը) մեր շատ արձանագրություններում և չպետք է զարմանալ, որ Գրիգոր Մազիստրոսի վկայագրում այն շեշտված է:

Դ) Վանքում պահվող սրբապատկերի (Ամենափրկիչ) գոյության մասին ոչ ոք չի կասկածում և այն չէր կարելի լուծյան մատնել (պատկերը հայ եկեղեցու առաջնակարգ սրբությունների շարքում է դասվում): Նրա ծագումը առաջին դար տանելը բացատրվում է հայտնի ավանդության մեջ, ըստ որի այն պատրաստվել է Հովհաննես Ավետարանչի կողմից:

Ն. Ակինյանի ներկայացրած փաստարկումներով արձանագրության վավերականության ժխտումը չի կարելի վերջնականապես լուծելի համարել, ուստի այն տեսանկյունը, որով մենք ենք առաջնորդվում, կարծում ենք, ավելի նախընտրելի է:

## К НАДПИСИ ОБ ОСНОВАНИИ АВУЦ ТАРА

ГАГИК САРКИСЯН

### Резюме

Самое раннее упоминание об основании монастыря Авуц тар встречается в надписи Григора Магистроса, датированной 1013 г. Сама надпись не сохранилась, о ней можно составить представление благодаря двум дешифровкам, сделанным Курд-Ованесом и Симеоном Ереванци в 20-ых гг. XVIII в. Однако в XVIII в., когда была найдена и дешифрована надпись, церкви, построенной Григорием Магистросом, не существовало, в силу этого говорить о наличии надписи в 20-ых годах XVIII в. невозможно.

Обстоятельства обнаружения надписи и ее местонахождения — вымышлены Курд-Ованесом Багревандци, деятельность которого охватывает 10—30-ые гг. XIX в.